Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2015 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Միջոցառումների անվանումները**	**Միջոցառումների կատարման արդյունքները**
ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտե	67.	«Ոռոգման նպատակով 2015 թվականին Սևանա լճից ջրառի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը:	22.04.2015թ. ընդունվել է <<Ոռոգման նպատակով 2015 թվականին Սևանա լճից ջրառի մասին>> ՀՀ կառավարության N466-Ա որոշումը:
ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտե	36.	Ջրամբարաշինության և ենթակառուցվածքների արդիականացման ծրագրերի նախապատրաստում	Ջրամբարաշինության և ենթակառուցվածքների արդիականացման ծրագրերի մասով հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են. ա) Կապսի ջրամբարի մասով՝ <<Ջրային ռեսուրսների համատեղված կառավարում/Ախուրյան գետ Կապսի ջրամբարի և ինքնահոս համակարգի կառուցում>> խորհրդատվական ծառայությունների համար CES Consulting Engineers Salzgitter GmbH, Braunschweing (Գերմանիա) և Երևանի պետական ճարտարապետության և շինարարության համալսարան (Հայաստան) գործընկերներ կազմակերպության հետ 2013 թվականի հոկտեմբերի 17-ին ստորագրվել է համապատասխան պայմանագիր: <<Կապսի ջրամբարի վերականգնման մանրամասն նախագծի և մրցույթային փաստաթղթերի պատրաստում, շինարարության վերահսկողություն>> մրցույթային փաթեթը, ինչպես նաև <<ՇՄՍԱԳ>> խորհրդատվական ծառայությունների մատուցման համար առաջադրանքի պայմանների նախապատրաստումն ընթացքի մեջ է: Մրցույթային փաթեթի

			հաստատումից հետո նախատեսվում է մանրամասն նախագիծն ավարտել 2016թ. երկրորդ կիսամյակում, որից հետո կտրվի շինարարական աշխատանքների մեկնարկը: Շինարարական աշխատանքների ընդհանուր տևողությունը կկազմի շուրջ 5 տարի և այն թույլ կտա ընդգրկել շուրջ 5 հազար հա նոր ոռոգելի տարածքներ, ինչպես նաև բարելավել ներկայումս ոռոգվող տարածքների ջրապահովությունը: բ) Վեդու ջրամբարի կառուցման համար <<Վեդու ջրամբարի և նրա ոռոգման տարածքների տեխնիկատնտեսական ուսումնասիրություն և Վեդու ջրամբարի շինարարության մանրամասն նախագծի պատրաստում>> խորհրդատվական ծառայությունների իրականացման համար <<ARTELIA EAU&ENVIRONMENT>> ՀՁ (Ֆրանսիա), <<SHER Ingenieurs-Conseils>> (Բելգիա) համատեղ <<JRTUC>> LTD (որպես ենթախորհրդատու, Հայաստան) 2013 թվականի նոյեմբերի 25-ին ստորագրվել է համապատասխան պայմանագիր: Զարգացման Ֆրանսիական Գործակալության (ԶՖԳ) ֆինանսավորմամբ ավարտվել է <<Վեդի ջրամբարի և ոռոգման համակարգի շինարարություն>> ծրագրի շրջանակներում նախատեսված տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրությունը: Վերոնշյալ ուսումնասիրություններն իրականացնող Խորհրդատուն հաջորդ փուլով 25.11.2013թ. կնքված պայմանագրի համաձայն, շարունակում է իրականացնել ջրամբարի և ոռոգման համակարգի շինարարության համար մանրամասն նախագծման և մրցույթային փաստաթղթերի պատրաստման աշխատանքները, որոնք կավարտվեն ընթացիկ տարվա վերջին: Ջրամբարի կառուցման աշխատանքները նախատեսվում է սկսել 2016թ.-ին, իսկ շինարարության ընդհանուր տևողությունը կկազմի շուրջ 5 տարի: Վեդիի ջրամբարը նախատեսված է Արարատյան հարթավայրի ավելի քան 4,000 հա հողակտորները ոռոգելու համար, որոնցից 2,800 հա՝ մեխանիկական ոռոգման փոխարինում ինքնահոս ոռոգման եղանակի, ինչի արդյունքում տարեկան կխնայվի շուրջ 12.0 մլն.կվտ.ժ էլեկտրաէներգիա: Ավարտվել է Զարգացման

			Ֆրանսիական գործակալության և ՀՀ ֆինանսների նախարարության միջև 75 մլն Եվրո արժողությամբ վարկային համաձայնագրի բանակցային փուլը: Ներկայումս սպասվում է ֆրանսիական կողմից համաձայնագրի բնօրինակի ստացումը, որպեսզի այն ներկայացվի ՀՀ կառավարության հաստատմանը: Ներկայումս վարկային համաձայնագիրը գնտվում է ՀՀ ֆինանսների նախարարության հետ բանակցային փուլում: Երկրորդ փուլով նախատեսվում են իրականացնել խողովակաշարի և ոռոգման ներտնտեսային ցանցերի կառուցման, ինչպես նաև նոր տեխնոլոգիաների ներդրման աշխատանքներ: գ) Եղվարդի անավարտ ջրամբարի վերակառուցման նպատակով 2014 թվականի հունիսի 19-ից սկսվել են իրագործելիության նախնական ուսումնասիրությունները (Pre-feasibility Study), որոնց վերաբերյալ 2014 թվականի նոյեմբերի 4-ին ներկայացվել է համապատասխան հաշվետվություն: Տեխնիկատնտեսական ուսումնասիրության աշխատանքները մեկնարկվել են 2015թ. հունիսի 11-ին և կտևեն 12 ամիս: Ծրագիրը ֆինանսավորում է Ճապոնիայի Միջազգային Համագործակցության Գործակալությունը (JICA): JICA-ի կողմից ընտրվել է ճապոնական SANYU CONSULTATS INC խորհրդատվական ընկերությունը: Ներկայումս հետազոտական թիմը Հայաստանում ավարտել է ջրամբարի վերաբերյալ նյութերի հավաքագրման աշխատանքները և հավաքագրված նյութերի ու տեղում իրականացված ուսումնասիրությունների հիման վրա կատարվել է Եղվարդի ջրամբարի նախատեխնիկատնտեսական հիմնավորման վերջնական հաշվետվության նախագիծ, որը ներկայացվել է հայկական կողմին: Նախագծի տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրությունները ավարտվել է և ս/թ դեկտեմբերի 4-ին քննարկվել է մջանկյալ հաշվետվությունը: Մանրամասն նախագծի և մրցութային փաստաթղթերի պատրաստման աշխատանքները նախատեսվում է ավարտել 2018 թվականին: Ճապոնական միջազգային համագործակցության գործակալությունը գարնանից սկսել է Եղվարդի ոռոգման

			ծրագրի լիարժեք լայնածավալ կիրառելիության ուսումնասիրությունը, իսկ ջրամբարի կառուցման աշխատանքները կսկսվեն 2018 թվականին, որի շինարարության ընդհանուր տևողությունը պլանավորված է 5 տարի: դ) Մաստարայի ջրամբարի կառուցման հարցը քննարկվում է Եվրասիական Զարգացման Բանկի հետ: Ջրամբարի կառուցումը թույլ կտա Արմավիրի մայր ջրանցքի 27-րդ կիլոմետրից հետո գտնվող համայնքներին մատակարարել ոռոգման ջուր ինքնահոս եղանակով, շահագործումից հանելով խորքային հորերը, իսկ Արարատյան ստորգետնյա ավազանից ջրառը պակասեցնել տարեկան շուրջ 5,3 մլն մ^3-ով: ե) Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ <<Ոռոգման համակարգերի արդիականացում>> ծրագրով նախատեսված <<Ուսումնասիրություններ և ծրագրային փաստաթղթերի կազմում>> պայմանագրով նախատեսված <<Բնապահպանական և սոցիալական կառավարման պլանի մշակում>>, <<Ծրագրի վերաբնակեցման քաղաքականության մշակում>> և <<Համակարգչային սարքավորումների ձեռք բերում>> պայմանագրերով նախատեսված աշխատանքներն ավարտվել են ս/թ հունիսի 22-ին: Ներկայումս քննարկման փուլում է վերոհիշյալ դրամաշնորհով պատրաստված Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագրի 40 մլն ԱՄՆ դոլարի արժողությամբ վարկային համաձայնագիրը:
ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտե	37.	ՀՀ խմելու ջրի ոլորտում բարեփոխումների գործողությունների ծրագրի իրականացում:	Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտներում պետական-մասնավոր գործընկերության զարգացման նպատակով ընդունվել են ՀՀ կառավարության 14.08.2014թ. <<Պետական-մասնավոր գործընկերության հետագա զարգացմանն ուղղված Հայաստանի խմելու ջրի ոլորտի բարեփոխումների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին>> N883-Ն և <<Երևան Ջուր>>, <<Հայջրմուղկոյուղի>>, <<Լոռի-ջրմուղկոյուղի>>, <<Շիրակ-ջրմուղկոյուղի>> և <<Նոր Ակունք>> ՓԲԸ-ների կողմից սպասարկվող տարածքներում պետական-մասնավոր գործընկերության ձևը և ժամկետը

			սահմանելու մասին>> N888-Ն որոշումները: Հետագայում ընդունվել է ՀՀ կառավարության <<Երևան Ջուր>>, <<Հայջրմուղկոյուղի>>, <<Լոռի-ջրմուղկոյուղի>>, <<Շիրակ-ջրմուղկոյուղի>> և <<Նոր Ակունք>> ՓԲԸ-ների կողմից օգտագործվող և պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի օգտագործման իրավունքը փոխանցելու ձևը, գնման ընթացակարգի կիրարկման կարգը, գնման մասնակցին ներկայացվող նախաորակավորման պահանջները սահմանելու, ՀՀ կառավարության 14.08.2014թ. N888-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> ՀՀ կառավարության N 1233-Ն որոշումը: <<Երևան Ջուր>>, <<Հայջրմուղկոյուղի>>, <<Լոռի-ջրմուղկոյուղի>>, <<Շիրակ-ջրմուղկոյուղի>> և <<Նոր Ակունք>> ՓԲԸ-ների կողմից սպասարկվող գույքի օգտագործման իրավունքը վարձակալությամբ փոխանցման գործընթացը կազմակերպելու նպատակով ՀՀ կառավարության 19.02.2015թ. N140-Ա որոշմամբ ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով: ՀՀ վարչապետի 27.04.2015թ. N309-Ա որոշմամբ հաստատվել է միջգերատեսչական հանձնաժողովի անհատական կազմը և աշխատակարգը: ՀՀ վարչապետի 2014թ. փետրվարի 24-ի N134-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության և Ասիական զարգացման բանկի միջև 02.12.2013թ. ստորագրված ենթակառուցվածքների կայունության աջակցության ծրագրի Փոխըմբռնման հուշագրով նախատեսված գործողությունների կատարման ժամանակացույցի 2-րդ կետի 4)-րդ ենթակետի կատարման նպատակով՝ Ընդունվել է <<Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի ռազմավարությանը և ֆինանսավորման ծրագրին հավանություն տալու մասին>> ՀՀ կառավարության 13.08.2015թ. N38 արձանագրային որոշումը: 5)-րդ ենթակետի կատարման նպատակով՝ ՀՀ ջրային օրենսգիրքը, դրան առնչվող իրավական ակտերը և ջրային

			ոլորտի ռազմավարությունը միմյանց հետ ներդաշնակեցնելու համար ընդունվել է <<Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>>, <<Լիցենզավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին>>, <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին>>, <<Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>> և <<Պետական տուրքի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին>> ՀՀ օրենքները: Ներկայումս Կոմիտեն շրջանառության մեջ է դրել <<ՀՀ կառավարության 13.08.2015թ. նիստի N38 արձանագրության 17-րդ կետով հավանության արժանացած արձանագրային որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը:

ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտե